

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՈՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱ

Rev.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայն դրոյի հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՈՒՆԻՔԻ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԱՍ (ՊՈԼԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ „Иравункъ“
BAPHA (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին ամբող-
ջովիկ կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Կարեւոր խնդիր մը լուսաբա-
նութեան նպատակով ըլլալու ան-
կեղծ փափագով ստորեւ կը հրա-
տարակենք «Անկողմնակալ ըլլանք»
վերնագրով յօդուած մը: Եթէ
Դաշնակցականներու և վերակազ-
մեալ Հնչակեաններու համար կու-
սակցական տեսակէտով կարեւոր-
ութիւն ունի խնդիրը, մեզի հա-
մար այդպէս չէ: Կուսակցական
տեսակէտը գոյութիւն չունի մե-
զի համար: Տարբեր կարգի նկա-
տումներով է որ մենք կը ստիպու-
ւինք խնդրոյն կարեւորութիւն
տալ, անոր լուսաբանութեան փա-
փաքի և մեր սովորութեան հա-
կառակ՝ հրատարակել գրութիւն
թիւն մը որ կուսակցական ներ-
քին խնդիրով մը կը զբաղի:

Տ. Ա. Արփիար և զինք չըջա-
պատողներ իրենց հրատարակու-
թիւններով և գլխաւորապէս Նոր
Կեանքով, կը ներկայացնեն այ-
սօր մտաւոր ոյժ մը որ չունի իր
հաւասարը արտասահմանի մէջ և
որ հետեւապէս կոչուած է իրա-
կան ազդեցութիւն մը գոր-
ծել ժողովուրդին հոգեկան ու
մտաւորական վիճակին վրայ: Տ.
Արփիարի հակառակորդներն ալ
չեն կրնար ուրանալ իրեն և իրեն-
ներուն գրական կարողութիւնը:

Ասանկ ուժի մը հանդէպ, որ
այնքան կարեւոր դեր մը պիտի
խաղայ, հայ ժողովուրդը ամենա-
մեծ իրաւունքով կը փափագի և
պարտի գիտնալ թէ Նար Կեանքի
խմբագրապետին գրական արժա-
նիքը բարոյական ինչպիսի հիմն-
քով վրայ կը թնամ է:

Մենք կուզենք ճանչնալ հրա-
պարակագիրը, որուն գրածները
կը լսուինք:

Կը կրկնենք թէ այս գիտու-
մով է որ կ'հրատարակենք Տ. Վա-
հան Շահրիմանի յօդուածը, յայ-
տարարելով այժմէն թէ պատրաստ
են ընդունիլ իրեն ընդգիծախօսող
լուրջ գրութիւններ ալ:

ԱՆԿՈՂՄԱԿԱՆ ԸԼԼԱՆՔ

Երբ ժողովուրդը ամենաարդար իղծ
մը կը ներկայացնէ Յեղափոխական
մարմիններուն մէջ համարաշխ դոր-
ծակցութիւն մը տեսնելու, շիտակա-
ւելի քան զդուելի է ամեն օր կու-
սակցական անիմաստ վիճարանու-
թիւններու ականջալուր ըլլալ:
Ամենուս բերնին մէջ սովորական
յանկերով մը դարձած է սա խօսքը,
թէ ազգային նուիրական գործ մը ու-
նինք փրկելու, անոր աշխատելու ենք
բոլոր սրտով:

Իրաւ որ ամեն բանէ վեր կայ Հայ-
րենիքը որուն համար զոհողութիւն
պէտք է ընել:

Կը հաւատամ որ յեղափոխական մար-
մինները մեծ բան մը պիտի կրնան
ընել իրենց քար ու քանդ Հայրենիքին
համար, պայմանաւ որ իրենց մէջ կա-
տարիալ համաձայնութիւն, սէր, կար-
գապահութիւն տիրէ, և ամեն բան
խելով գործուի:

Ու այս ամենուն իրադրոժմանը ան-
վրէպ դարձան է միմիայն Ջոհողու-
թիւնը առանց որուն ոչինչ մեծ գործ
կատարուած է մինչև հիմայ:

Հայ յեղափոխականները՝ որոնք ի-
րենց անձերը իսկ զոհելու տրամադ-
րութիւն ցոյց կուտան, ինչո՞ւ կարող
չըլլան զոհելու նաեւ իրենց անձնա-
կան նկատմանները, փոքրիկ մտա-
ծումները:

Եղբայր եղբոր դէմ մղուած կատաղի
կռիւնները, կուսակցական մոլեռան-
դութիւնը, տարակոյս չի կայ, կրնան
աւաղին վնաս պատճառել ազգային
գաւթին:

Անհրաժեշտօրէն պէտք է վերջ մը
տալ բոլոր անհամաձայնութիւննե-
րուն, բոլոր այն անիմաստ, գրգռիչ
հակառակութիւններուն որոնք տաղու-
կալի եւ իրապէս զրուելի են այլ եւս:

Որ կողմն ալ ըլլայ մեղաւորը, դառն
բայց ճշմարիտ իրողութիւնը սա է որ
հայ յեղափոխութեան երկու մեծ կու-
սակցութեանց մէջ, բաւական երկար
ժամանակէ ի վեր անհաշտ խռովու-
թիւն մը կը տիրէ, ամեն անկողմնա-
կալ հայու ջիղերուն զպլոզ, աւելի
քան ցաւ ազդող խռովութիւն մը՝ ո-
րուն պատճառով հայ Յեղափոխու-
թիւնը, Գաղափարը տուած է ու դեռ
կը տուծէ անդադար:

Մինչև վերջերս, մութին մէջ ի-
րար զիրար կ'ամբաստանէին Հիմայ
վարագորին մէկ ծայրը վեր առնուած
է քիչ մը. պէտք է ամբողջը բանալ
ճշմարտութիւնն ու արդարութիւնը իր
խկութեամբ տեսնելու համար:

Դաշնակցականներ կանուխէն ի վեր,
զանազան ձևերու տակ կ'ամբաստա-
նեն գլխաւորաբար Պ. Արփիարը որ

օրինաւոր, ընդհանուր ժողովի մը մի-
աձայն հաւանութեամբ այսօր հնչակ-
եան վերակազմեալ կեդրոնի մէկ ան-
դամն է կարեւոր, կարող ու անմեղ
ճանչցուած՝ գէթ զինքը ընտրող կու-
սակցութեան կողմէն:

Մէկ օր ալ միութեան խնդիրը մէջ
տեղ նետուեցաւ. Հնչակեան կուսակ-
ցութիւնը իր կողմէն ամեն կարելի
զիջողութիւն ըրաւ ազգին այդ բուռն
պահանջը իրագործելու անկեղծ ցան-
կութեամբ:

Դաշնակցականներ հախ հակառակե-
ցան, շտտ մը առարկութիւններ ըրին
ու մանաւանդ պահանջեցին որ յեղա-
փոխական հրապարակէն իսպառ հե-
ռանայ այն Արփիարը որուն սիրտը
զաշտն մը միւսած է ին իրենք:

Պ. Արփիարեան տեղի տուաւ դաշ-
նակցականներու այս պահանջին առ-
ջեւ ալ, որպէս զի անյաջողութեան
պարագային իր անձը պատրուակ մը
չի դառնայ կրկին: Ու վերջապէս բա-
նակցութիւնները սկսան: Արդիւնքը.

—Մարտ աշխարհի առջեւ հրատարա-
կեց արդէն իրողութեանց պատմու-
թիւն մը որ դաշնակցականներու ան-
կեղծութիւնը կասկածի տակ կը դնէր
եւ զոր Դրօշակ չի հերքեց մինչև այ-
սօր:

Այս առիթով անկողմնապահու-
թեամբ պէտք է դիտել տամ Շար-
ժուրին որ անիրաւութիւն մըն է ա-
ռանց փաստի, առանց Մարտի պարբե-
րաբար հրատարակածները հերքել կա-
րենալու, գրել թէ Պ. Արփիար ամբողջ
ազգին նուիրական մէկ իղծին դէմ
կը գտնուի եւ կը բանայ աշխարհի
կռիւ մը ուսկից ամենքս ալ կը նող-
կանք:

Կռիւներուն չափ վնասակար են սու-
տերը որոնք կայծը հրդեհելու եւ մըտ-
քերը պղտորելու միայն կրնան նը-
պաստել:

Չէ, քիչ մը անկողմնակալ ըլլանք.
Արփիարը չըջապատողները ոչխարներ
ըլլալու են որ «առանց իրենց հաւա-
նութեան» թող տան որպէս զի անի-
կա՛ ըստ հաճոյս, իր անձին յատուկ
պաշտպանութիւններով Մարտի էջերը
լեցնէ:

Եթէ խոշոր ու ու գահավէժ վճիռ-
ներ արձակելէ առաջ, քիչ մը լուսա-
բանուելի զիջած ըլլայինք, բոլորովին
հակառակ ըլլար թերեւս մեր համո-
ղումը:

Բայց «շարունակ համընդհանրութեան
ցանկացող» յեղափոխութեան պաշտ-
պան Շարժումը մէկէ աւելի անգամ է
որ թաքուն եւ անմիկնելի հակառա-
կութիւն մը ցոյց կուտայ «անկողմն-
ակցութեան մէկ մասնիկ»ին դէմ, ո-
րուն գոյութիւնը անգամ կը փորձէր
ուրանալ, ճիգ թափելով կլլեցնելու,

թէ Նոր Կեանքը Արփիարին անհատա-
կան թերթն է:

Անոնք որ անկեղծ են եւ սրտանց
կը փափաքին «սիրով մնալ» իրենց եղ-
բոր, իրենց բարեկամին հետ, զրպար-
աութեամբ ու նախատինքով չեն յար-
ձակիր անոր վրայ եւ իրենց առաջ-
նորդ կը նորին միշտ ուղղադատու-
թիւնը եւ անկողմնակալութիւնը:

Եթէ տակաւին չենք հասկցած, տը-
խուր գէպեր կրնան համոզել մեզ որ
անանկ միակողմանի եւ զուտ թշնա-
մական տողերը աւելի եւս կը գրգռեն,
իրարու դէմ կը շարեն կուսակցու-
թիւնները եւ ա՛լ աւելի կարծարծեն
այն սին վէճերը որոնք՝ կերելի թէ,
վերջ չպիտի գտնեն դժբաղդաբար մին-
չեւ որ ամէն բան անաչառութեամբ
չի քննուի ու չի պարզուի:

Ի մէջ այլոց յիշենք միայն թէ չա-
տեր կան — դաշնակցականներ առհա-
սարակ — որոնք առանց, գէթ առ այ-
ժմ, փաստ մը յիշելու, առանց դեռ
եւս ապացոյց մը մէջտեղ հանելու եւ
չատ անգամ ալ առանց բան մը գիտ-
նալու, կը պրտան թէ Արփիարը մատ-
նիչ է:

Շատեր ալ կան որոնք՝ իրաւացի
կամ անիրաւ, համոզուած կամ խաբ-
ուած, այնպէս՝ հաւատացած են թէ
Արփիարի անունին չուրջը տարած-
ուած բոլոր զրոյցները անհիմն զըր-
պարտութիւններ են, ուստի կը պա-
հանջեն որ ամբաստանողները մէջ տեղ
գան, պատուոյ ատենին մը առջեւ
ներկայանալու քաջութիւնը ունենան
ու խօսին, որպէս զի յայտնուի այլ
եւս ճշմարտութիւնը՝ որուն միայն
պէտք է կամենալ ամեն յաղթանակ:

Եթէ՛ ինչպէս կը կարծեմ, ասանկ
ժողովի մը կազմութիւնը արգիւղ ան-
պատեհութիւններ կամ անյաղթելի
գոնարութիւններ չի կան, հնչակ-
եանները եւ անոնց հետ բոլոր ան-
կողմնակալ հայերը իրաւունք կունե-
նան փախուստի ճամբայ մը ենթադ-
րելու դաշնակցականներու յամառ մեր-
ժուկին մէջ:

Եւ Շարժում պարապ յոգնութիւն
մը ստանձնած կ'ըլլայ, երբ անհարկի
յարձակումներու մէջ գտնուինք, դաշ-
նակցութեան փաստաբանը կը ներկա-
յանայ այսպէս:

Բացառանկութիւններով հերքեց այն-
քան ժամանակի վասնեցինք. «Հաղա-
րէն մէկը» շտտ շտտ Հոմերոսի Կալիսթը
միայն կը յիշեցնէ մեզ իր «Պողիպոտի
ճանկեր»ով:

Ճշմարտութիւնը եւ փաստերը մի-
այն պէտք է խօսին այլ եւս, աւելի
լաւ, պատուոյ ատենին մէջ, զոր ա-
ռաջարկած է արդէն Հնչ. կուսակցու-
թիւնը: Լրագրութեան մէջ թեր ու
դէմ քաջքշուքները լոկ «եղբայրասպնա

կոխուր կրնան ստեղծել կամ սաստկացնել:

Մարտի պաշտօնական յայտարարութիւնները անձի մը կողմէն յարուցուած «ամօթալի կոխներ» անուանել, զայրանալ, փրփրիլ, եւ Դոշակի անուանարկիչ ակնարկութիւններուն վերայէն աչքը խուփ ցատկէլատիկա անկեղծ «հայու սրտի» գործ չէ:

Անկողմնակալութիւնը կը պահանջէ գոնէ երկու կողմին համար անողոր ըլլալ ու միշտ արդար գտնուիլ:

Կա՛մ Դոշակեանները իրենց մէջ զրպարտիչներ ունին, կամ՝ Հնչակեանները մատնիչներ կը պաշտպանեն. ահաւասիկ մէկը այն խնդիրներէն, որոնք պէտք է այլ եւս լուծուին, վերջանան վճռական ու անաչառ կերպով: Անոնք որ միակողմանի դատողութիւններով կը խօսին, անձնական կըռնենքու «թուեալոր ռուբը» պատրաստած կըլլան եւ կուսակցութեանց մէջ գտնուած խրամատը լայնցնելու միայն կրնան ծառայած ըլլալ: Զըմբոնե՛ր Շարժում:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

Վառնա, 30 ապրիլ 98

ՌՈՒՄԱՆԱՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն նախ. թիւի)

Քիչ մը ետքը փոքրիկ տետրակ մըն ալ կը հանէ, թուրքերէն նոյն գրքէն օրինակուած՝ մեր եկեղեցւոյ ուղղափառութիւնը ցոյց տալու պատրուակաւ: Այս տետրակ իր խառնաշփոթ պարունակութեան համար արժանի չէ եւ ոչ գրի անցնել, բայց որովհետեւ Տ. Մոսկովիեան ասիկայ իբր մեծ բան գնահատելով Ալէք. Լահովարի նախարարին նուիրեց իբր հնչակեան ստորագրելով, մենք ալ մի միայն այս կէտէ ի տես առնելով մէջ լեւրինք, որու կողքին վրայ պարօն եւ գաղաղակ տնտեսները չէ մոռցած գնել:

Տ. Մոսկովիեանի բանուկ գործարարէն շուտով ուրիշ տետրակ մը ալ երեւան ելաւ Taina Botezului . . . վերնագրով: Ի՛նչ

խախտուակ թարգմանութիւն եւ ի՛նչ անճոռնի լեզու որով մեր մը կրտուլեան անարատ խորհուրդը եւ մեր գրոց վսեմ լեզուն բոլորովին ծաղր ըրաւ ռումանաց առջեւ. ասով կրնամ ըսել թէ Տ. Մոսկովիեան պարզապէս թուրքակ մըն է որ կը լսէ, լսածը կարտասանէ, բայց ո՛չ կարգաւորած եւ ո՛չ զըրաժն անգամ կը հասկնայ, սակայն տեսէ՛ք թէ ասոր կողքին վրայ նոր տնտես մըն ալ աւելցընելէ ետ չկեցաւ, ինքզինք աւագ քահանայ կոչելով, իսկ ներքի կողմը երկու տեղ ալ իբր հեղինակ ստորագրած է:

Եթէ Պ. Տարագրեալը ռումաներէն լեզուն լաւ սորված է, կը հըրաւիրեմ որ առնու Taina Botezului si Liturgia Bisericei Armene 1895 ին մեր տպագրած գիրքը, բանայ 185 - 201 էջերը, կարգայ եւ տեսնէ թէ ի՛նչպէս պատուեցինք հոն Տ. Մոսկովիեանի գիմակը ու բոյն երեսը իր բնական գոյնովը ներկայացուցինք ընթերցողաց. իսկ եթէ ռումաներէն չգիտեր, կը հրաւիրենք որ կարգայ Արմէնիա լրագրոյ 1892 տ. թ. 39, 40, 41 եւ 42 թերթերը որոնց մէջ շատ սիւնակներ նուիրուած են այս խնդրին:

Մինչեւ հոս գրածներէս տեսնուեցաւ թէ Տ. Մոսկովիեան բանագործութիւն ըրած է եւ յանիրաւի ինքզինքն ներկայացուցած՝ իբր թարգմանիչ, հեղինակ եւ իբր աւագ քահանայ. տեսնե՛ք թէ ռումաներէն լեզուն չգիտեր, գրածը չը հասկնար, բայց կը կարծէինք որ գոնէ հայերէնը գիտէ, սակայն այս մասին ալ չլսողուց մեզի որ շատ ժամանակ խաբուած մնանք, այլ նոր երկասիրութեամբ մը ցոյց տուաւ նաեւ հայկականի մէջ ալ ունեցած գիտնական կարողութիւնը:

Տ. Մոսկովիեան 1893 տարուոյ

հայերէն օրացոյցը ռումաներէնի կը թարգմանէ: Այս օրացոյցի մէջ որչափ բառ կը տեսնուինոյն. չափ ալ սխալը կը ներկայանայ: Եթէ Պ. Տարագրեալը այս օրացոյցը տեսնէր, վստահ եւ որ միակ պիտի ըսէր թէ յիշաւ Տ. Մոսկովիեան զպրտտան աստիճաններու վրայ սիրտը չէ մաշեցուցած պատմութիւն սովորուղեւ զեւէր գիտեր թէ Պարթեւ, խուրին Մակարայեցի, Գրեցի, խոտաճարակ, իննակնեայ, եւն անունները ի՛նչ կը նշանակեն. չէր գիտէր թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ երկու որդի ունէր եւ երկու թոռ. չէր գիտէր թէ Շամունայ կին էր եւ ո՛չ ուր, եւն են: Այս օրացոյցի հարեւրաւոր սխալները սրբագրելու համար ստիպուած եղանք ասոր ներհակ մեր օրացոյցը ընտապմամբ հանել ու աւագ քահանային խայտառակ օրացոյցը հերքել: Եւ որովհետեւ խօսքը 1893 տարուոյ հայ օրացոյցի ռումանական լեզուի մէջ հրատարակուելուն վրայ է, պատշաճ սեպեցինք քիչ մը շեղիլ մեր նիւթէն, ուրիշ համառօտ տեղեկութիւն մըն ալ տալու համար:

Վերջի տարիներս երեւան ելան ռուման մոլեռանդներ որոնք սկսան մեր կրօնքին եւ արարողութեանց վրայ գծուած առասպելներ հրատարակել ըստ հնոյն յոյն կղերի. նմանապէս պահուց եւ սրբոց տոներն ալ կծու եւ հեգնական ձեւով կը նկարագրէին: Ասոնք տեսնելով, 1891 ին եւ 1895 ին հրատարակած մեր ռումաներէն գրքերովն ո՛չ միայն չբացինք անոնց ծիծաղական զրպարտութիւնները, այլ եւ այնպէս վար զարկինք անոնց իմաստակութիւնը որ այսօրուան հայ եկեղեցւոյ խնդրով զբաղողները շատ զգուշութեամբ եւ վաշիւնչ կերպով կը խօսին, մի մի. այն աստուածաբանական կէտէ

վիճարանելով, որով կուզեն ապացուցանել թէ Հայերը միմեկի մէկ թնոյրիւն կը դառնան ի թրիս. տոս ցիւտոս եւ ոչ երկուս թնոյրիւն, ինչպէս որ օրթոտոքս եկեղեցին կը դառնան: 1891 ին հրատարակած գրքիս մէջ մոլեռանդներուն տասը զրպարտողական կէտերուն պատասխանեցի: 1895 ին հրատարակածիս մէջ ալ շատ բաներու վրայ գրեցի, որոնց մէջ նշանակութեան արժանի է Պոլս. ընչտի հանգ. Գրիգոր Մովսիսյան. տին գրածներուն գէ՛մ տուած պատասխանս: Հոս ընդարձակօրէն բացատրեցինք թէ ի՛նչ է Առաջաւորաց պահքը եւ ո՛վ է Ս. Սարգիս որ հայերը կը պաշտեն: Իսկ 1893 ի մեր օրացոյցի մէջ առաջին անգամ Հայոց տոմարին վրայ տեղեկութիւն տուինք Ռումանիոյ մէջ: Երբ 1894 ին Տ. Ղեւոնդ Կալապի Արթ. քահանայ տարեցոյց հրատարակելու փափաք ցցուց ու մեր աշակցութեան գիմեց, սիրով յանձն առինք անոր օգնել ու ռումաներէնի մէջ գրած տոմարական գիտելիքն նորէն հայերէնի վերածելով յիշեալ Տարեցոյցի մէջ՝ տպագրելու յանձնեցինք ու տարուէ տարի ճշտեցուցինք այս մասը սրբոց պատմութիւններով, որ այսօր այս ճոմարական գիտելիքը էական մաս կը կազմէ Տէր Ղեւոնդի տարեցոյցին մէջ:

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԻՐՈՒԹԵԱՆ

Տօպրիչ, 18 Ապրիլ

Ժամանակէ մը ի վեր այստեղի Ընթերցասիրաց ընկերութեան վարչութիւնը դադարած է գործել: Երբ Ընկերութիւնը տեսնելով որ միայն իր անդամներու շարքով թափարանելով չպիտի կարողանայ իր անհրաժեշտ ծախքերը գոցել, որոշեց թատերական ներկայացում

ՍԱՐԿԱԻԱԳ

(2)

Բ.

1860 թուականից Վասիլի կեանքի մէջ սկսեալ է մի նոր շրջան: Այդ թուին նորա հօրեղբայրը գնաց Երուսաղէմ, առանց մի փարայ թողնելու իւր եղբորորդուն ապրուստի համար: Կարծես, այս բաւական չէր. նա դեռ իւր ձին էլ թողեց Վասիլի խնամքին, որ հօրեղբոր բացակայութեան ժամանակ պարտական էր պահել ու կերակրել նորա գրաստը: Երբոր սարկաւազը բերցրեց թէ ի՛նչով պէտք է նա կերակրուի այդ բոլոր ժամանակը այն էլ ձին չընքին, վարդապետը պատասխանեց. «Խնդրի՛ր, եւ ինչ որ կ'տան, նորանով էլ ապրի՛ր. էլ ո՞ր օրուայ համար ես հագել այդ սեւ վերարկուն»:

Հօրեղբոր ուղեւորութիւնից յետոյ, Վասիլը քաջուեց իւր մօր մօտ եւ ըսկսեց պատահական աշխատանքով մի կերպ կառավարուել:

Նա առաջ էլ ի բնէ ատում էր ժողովրդի հարստահարիչներին եւ տեղւորներին, ինչպէս եւ յունադաւանւան վարդապետները, վախառուները, թուրք պաշտօնեաները. եւայլն, բայց

այժմ իւր հօրեղբոր վարմունքներից եւ այն ստորութիւններից յետոյ, ստորութիւններ, որոնց ենթակայ է աղքատութեան վիճակուած մարդը, նորա ատելութիւնը եւս առաւել սաստկացաւ: Այսպիսով, կարծես, նոյն իսկ կեանքը զրոգում էր այդ համաստ կուսակցութիւն՝ աղքատութեան հզօր ակոյեան դառնալու: Սակայն այդ ամենը զեռ եւս անորոշ եւ մութն էր երկտասարդ սարկաւազի գլխում եւ միայն Աստուած գիտէ թէ վերջ ի վերջոյ ի՛նչ զուրս կըզար կեմակուց, եթէ որ ճակատագիրը պատահմամբ Կարլովօ չուղարկէր յայտնի բուլղար գիտնական հայրենասէր Բակովսկուն, որի հետ Վասիլը շուտով ծանօթացաւ: Կան փաստեր, որոնց հիման վերայ կարելի է կարծել, որ Լեվսկին նոյն իսկ այդ ծանօթութեանն է պարտական իւր հայրենասիրական ձգտումներով եւ քաղաքական ազատութեան զաղափարներով, որոնք հիմք եղան նորա բոլոր ապագայ գործունէութեան:

Այժմ Վասիլ սարկաւազին տեսնում ենք արդէն ոչ թէ արեգաճերի շրջանում, այլ մի ընկերութեան մէջ, ուր նորան չըջապատում են Կարլովօի ամենալաւ երիտասարդները, որոնց մէջ նա զարթոնում է բողոքի եւ որոնց հետ նա զբաղուած է միմիայն այն մտքով թէ ի՛նչ ճանապարհով եւ կամ ինչ միջոցներով կարելի է հասնել հայրենիքի ազատութեան սուրբ գործին: Նորա այդ ժամանակուայ ընկերներից եւ բարեկամներից շատերը ապագայում Բուլղարիայի անկախութեան ամենագործունէայ անդամները հանդիսացան:

Մինչ այս մինչ այն Հաջի-Վասիլ վարդապետը վերադարձաւ Երուսաղէմից եւ հրամայեց Լեվսկուն անմիջապէս ճանապարհ ընկնել իւր հետ ժողովարարութիւն անելու: Լեվսկին այս անգամ բացարձակապէս հրաժարուեց այդ առաջարկութիւնից, որով եւ վերջ գրուեց նոցա յարաբերութեան: Այդ զէպքից յետոյ նորան աւելի եւս անտանելի դարձաւ այն նեղ եւ խեղդիչ շրջանը, որանդ նա իւր կոչման համեմատ ստիպուած էր անցկացնել իւր երկտասարդ օրերը: Այդ ժամանակ բուլղարների աւետեաց երկիրն էին համարուած Սերբիան եւ Ռումանիան: Վասիլը նոյնպէս որոշեց փախչել այն տեղ, մանաւանդ որ լսել էր թէ այն տեղ, Դանուբ գետի միւս կողմում, արդէն կան բազմաթիւ բուլղար հայրենասէրներ, որոնք ոգեւորուած են

հայրենիքի ազատութեան զաղափարով: Սակայն այդ ցանկութիւնը զբուռն բերելու համար հարկաւոր էր յաղթել շատ արգելքներ: Ամենից առաջ արկաւոր էր ճանապարհածախք ձեռք բերել: Ամենամեծ դժուարութիւններով կարելի եղաւ բարեկամներից եւ ծանօթներից մի քանի իրաւունք, որոնց վերայ աւելացրեց նաեւ այն փոքրիկ գումարը, որը ստացուեց իւր հոգեւորական զգեստի ծախելուց: Աղգականների օգնութեամբ կարելի եղաւ ստանալ նաեւ վկայական, որով կարելի էր քիզիքի (անցագիր) ստանալ Պոլսից: Քաղաքում Բացի ստանալից իբրեւ վարձ իւր այնքան ժամանակուայ ծառայութեան, նա վերցրեց կամ, կարելի է ասել, ուղղակի գողացաւ իւր հօրեղբոր ձին եւ անայտնացաւ Կարլովօից: Իմանալով իւր ձիւ կորուստը, Հաջի-Վասիլը անմիջապէս ընկաւ Վասիլի ետեւից, սպառնալով նորան բանտարկել տալ, —բայց Լեվսկին արդէն անայտնացել էր: Հասնելով Պոլսից իւր անցագիր ստանալով, նա, առանց ժամանակ կորցնելու, ուղեւորուեց զէպի Սերբիա: Նիշ քաղաքում սեւ ձին ծախեց, հանեց իւր վրայի սեւ արեղայական վերարկուն, մագերը խզել տուեց եւ «Իդնաթիտո սարկաւազ» անուան փոխանակ՝ ընդունելով իվանով կեղծ անունը, 1862 թուի մարտ ամսին անցաւ Սերբիայի սահմանը:

մը տալ ի նպաստ ընթերցարանի, խել մը պարոններ, այն նախանձոտ գասակարգէն որ չի գործեր, բայց գործողներու արգելք ըլլալու պատրաստ է միշտ, ջանացին ան. յաջողութեան դատապարտել ձեռնարկը:

Հասկցան որ չպիտի յաջողին ու սկսան համակիր երևալ ներկայացումին: Բայց իրենց խուլ հակառակութեան և ասկէ հաւանականօրէն ծագելիք ժողովրդային երկպառակութեան մը առջեւն առնելու համար, հարկ եղաւ իւրենց պահանջումին համեմատ, նոր գործ. ժողով մը ընտրել: Սակայն այդ ընտրութեան ժամանակ տրուած որոշումները անգործադրելի մնացին: Երկու ներկայացումներ տրուեցան, մէկը ընթերցարանի և միւսը վարժարանին ի նպաստ: Այս միայն եղաւ գործ. ժողովին գործունէութիւնը: Նոյն իսկ 3-4 ամիսէ ի վեր նիստ չէ ունեցած ժողովը և ներկայացումներէ գոյացած 200 ֆուլ սպառնելու վրայ է: Բաժնեգիրներու հաւաքումն իսկ դադարած է, որովհետեւ հաւաքիչ նշանակուած անձը՝ իրեն անպատուաբեր գործ մը կը համարի եղեր դրամ հաւաքել:

Վերջապէս ընթերցարանը հոգեվարքի մէջ կարելի է նկատել և ասոր բոլոր պատասխանատուութիւնը կը ծանրանայ գործ. ժողովին վրայ որ կը շարունակէ իր անշարժ և անգործ գոյութիւնը: Խօսք մըն ալ աղքատախնամի մասին: Սա մինչեւ մարտի վերջերը կրցաւ նպաստ հայթայթել կարօտեալներու. այդ թուակառնէն դադրեցուց իր գործառնութիւնները: Ժողովուրդը մինչեւ այսօր զուր կըսպասէ որ վարչութիւնը գումարէ ընդհ. ժողովը և անոր ներկայացնէ իր հաշիւները: Չեմ գիտեր թէ այս արդար պահանջին մօտեցնալ գոհացում պիտի տրուի, թէ՛ դեռ երկար պիտի սպասենք:

Գաղղիական

ԼՐԱՔԱՂ

Փ. Պօլսէն կը գրեն միւր թէ յատուկ մասնախումբի մը նախաձեռնութեամբ թատերական ներկայացում մը տրուել է ի նպաստ «Երկու ազգօգուտ թերթերու և երկու հինաւուրց գործիչներու»: Թատերասարհը լի էր հանդիսատեսներով, սակայն կըսուի թէ միայն 30 ֆր. զուտ հասոյթ գոյացած է: Այս երկու իրողութիւնները իրարու հակասական կերեւան:

Նոյն թղթակիցը կը հերքէ այն լուրը թէ իրաւունք փ. Պօլսոյ մէջ կուսակցութեան մը կողմէ հալածանքի ենթարկուած ըլլայ:

Աղեքսանդրիոյ մէջ կատարուած է հանգուցեալ Յակոբեան

Թաղաւոր բաշայի գերեզմանին վրայ կառուցուած դամբարանին հանգիստաւոր օրհնութիւնը: Այս առիթով Տիկին Յակոբեան բաշա նուիրեր է 100 անգղ. ոսկի ի նպաստ վերադարձող չքաւոր գաղթականներու և 30 ոսկի աղքատ ուսանողներու հագուստ շինելու համար: Տիկինը Զատիկ առիթով ալ կարօտ գաղթականներու բաժնել տուած է 25 ոչխար և 20 զամբիւղ բրինձ:

Թաղաւոր բաշա, ինչպէս կը յիշեն ընթերցողները, կտակով 5000 ոսկի թողած էր իր ծննդավայր իզմիրի առաջնորդարանին՝ աղջկանց վարժարանի մը շինութեան համար:

Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած է աղգ. թանգարան—ընթերցատուն մը:

Տիգրիս կը գրէ թէ Նիւ-Եօքի մէջ ապրիլ սկիզբները վեց հայերէն բանախօսութիւններ տեղի ունեցին 24 ժամուան միջոցին: Արդէն Ամերիկայի երկիրներն տակամէն բան արտակարգ հանգամանք ունենալու է:

Մանչեսթէրի աղգայինները փափագ յայտնած ըլլալով իրենց ծախքովը 30 որբ պահելու, Ս. Պատրիարքը յարմար տեսած է Այնթապի մէջ հաստատել որբանոց մը, նոյն քաղաքին և չըջականերու անոց մանուկներուն համար:

Նոր որբանոց մը բացուած է վանի կամրուրի Ս. Աստուածածին վանքին մէջ:

Ս. Պատրիարքը որոշել է Բաբելոնի աղգ. վարժարանին տալ նաեւ որբանոցի հանգամանք և այս նպատակով 5 ոսկի ամսական յատկացուցել է անոր, զատ գումար մըն ալ զրկելով դպրոցի կազմաւորութեան նախնական ծախքերուն համար: Բաբելոնի որբերէն 20 հատը կուգէր որդեգրել կարինի Տօքթ. Չէմպլըզ, բայց չէր ընդունել Պատրիարքարանի սա պայմանը թէ միսինարական որբանոցին մէջ որբերը հայկ. եկեղեցիին վարդապետութիւնները ուսանին հայ ուսուցիչէ մը: Միայն կընդունէր որ կիրակի և տօն օրեր աղգ. եկեղեցին երթան: Կարինի առաջնորդական տեղապահը երկար բանակցութիւններ ունեցել է տօքթ. Չէմպլըզի հետ և շատացել է իսկ առաջարկելով որ որբերը գոնէ հայ եկեղեցիին պատմութիւնը սորվին: Տօքթօրը այս ալ մերժել է և բանակցութիւնները խզելով՝ նուիրատուներուն հոգաւորացիներ է որբերուն համար իրեն զրկուած դրամը:

Այս առիթով անշահական չէ իմանալ թէ Եգիպտոս գերման և ամերիկեան միսիօնարները Պայպըլ հասուցի միսիօնարական ժողովին հրահանգին համեմատ՝ յօժարած են որ իրենց խնամքին յանձնուած հայ որբեր հայկ. եկեղեցիին դաւանանքը սորվին

հայ ուսուցիչէ մը. բայց ասոնք ալ պայման դրած են որ որբերը 13 տարեկանէ առաջ հաղորդութիւն չառնեն հայ եկեղեցիին մէջ:

ՀԱՆԿԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի նպաստ կառուցման Աղգ. Եկեղեցիի շրջափակի Ս. Սարգիս եկեղեցւոյ վանանոցի ՏՈՒՑԱՆ Ա.

Տեսակը,	Ու. ֆր. Արծ. ֆր.
Բարեկ. Ստամբուլուեան	400
Մարտիրոս Փափագեան	300
Սարգիս Գիւրտեան	200
Յակոբ Մալի	200
Մաղաք Միսաեան	150
Աթանիոսիէն Յարութեան	150
Կ. Կ. Փափագեան և Եր.	
Նորէք Տափուտեան	100
Սարգիս Գուլամեան	100
Խաչիկ Տամատեան	100
Կարապետ Փափագեան	100
Մատթիա Սիւքիսեան	100
Յովսէփ Բարսամեան	100
Էնկիպար Մերոնեան	100
Սարգիս Ուզունաօղոսեան	100
Եղբարք Ազիզեան	100
Միքայէլ Գապատայեան	100
Աբէլ Արէլեան	100
Յակոբ Ս. Թօսպըզդեան	100
Կարապետ Սանտալեան	100
Հաճի Աւաղ Մարգարեան	100
և որդիք	100
Սիմօն Մարինեան	100
Յարութեան Սիւքիս.	80
Գաբրիէլ Իսաքեան	80
Աւետիս Պարոնեան	60
Պետրոս Նիկողոսեան	60
Փիլիպպոս Չորաքեան	60
Յովսէփ Յովհաննէս.	50
Կարապետ Երիւնեան	50
Սարգիս Գաբրիէլեան	50
Միսա Առաքելեան	50
Պետրոս Գուլամեան	50
Ընդ.	50
Գումար	3110 410
Դիւան Թաղ. Խորհրդոյ	

«ԻՐԱՒՈՒՆՔ»-ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ո. Տօպրիչ, կրնան փաստել Տօպրիչի աղգայիններուն ծանօթ ըլլալ. սակայն երբ մեզի ծանօթ չեն և երբ ձեր գրածին ճիշդ հակառակը ուրիշներ կը գրեն միւր, կը ստիպուինք վերապահութեամբ վարուիլ: Ազատ էք ուրիշ լրագրողներու դիմել. միայն թէ փաստերով խօսելու էք որպէս զի ձեր գրութիւնը ընդունելութիւն գտնէ:

Լոյս տեսաւ
ԲԱՅՅԻԻ
ՍՍՄՈՒԷԼ
Պատմական վեպը
Ա. Բ. Գ. Գիրք
Հեղինակին վերջին պատկերով
Գիրքն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա. Բ. և Գ. վերջաբանով և «Կայծեր» հատոր Բ. լիւսկաւար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնը շարունակուած է. երկու գրքի միասին բաժանորդագրին է՝ 40 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ կարծես 14 շիլինգ. Գանկացողները թէ՛ Սամուէլի և թէ՛ Դաւիթի միւս երկերի համար, կարող են դիմել այս հասցէին
Mme Raffi
270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի երեսփոխանական ժողովոյ ընտրութիւնները կարեւոր փոփոխութիւն մը առաջ չի բերին ժողովին կազմութեան մէջ, կուսակցական տեսակէտով:

Զօրեղ մեծամասնութիւնը կը կազմեն դարձեալ հանրապետականները:

Նշանաւոր ընկերվարական Ժ. Լէս չի կրցաւ վերընտրուիլ:

—Քրուստիոյ հայերիս իշխանը հասաւ Բէքին ուր փառայեղ ընդունելութիւն մը եղաւ իրեն:

—Կլատսթօնի առողջական ընդհանուր վիճակը քիչ մը բարւոյրած է վերջին ժամանակ: Սակայն կատարեալ ապաքինութեան մը յոյսը նորէն այնքան նուազ է որքան առաջ:

ԹԻԻՐՔԻԱՏԱ ԻՍԼԱՄԱԹԸ ՃԵՏԻՏԷ

Էրմէնիսթան իշխն նիճէ սէնէ. Էրմէն պէրու իճրասը մուգար. Էր օլան իսլահաթը ետքմագ մէ. մուրիյէթի իլէ Անատոլոյա կէօն. տէրիլէն սէր զօմիսէր Շաքիր բաշա տէրէօստէ իթտիկի պու նա. զիք մէմուրիյէթի Երուզղտան ալմըլ օլաղը թալիմաթ իւղը, օ տէրէճէ նէղաթէթ ու մէհարէթ լէ իճրա իթմիլ տիր քի իւք կիւն. տէն այագ պաստըղը եէրլէրի ալ գանլար իլէ միւլէմմա՝ կիրտիկի շէհրլէրի խարապ վէ միւլէրն թիճարէթ ու զրաթլընը մահվ իթտիրմիլ օլմաղլէ պէրապէր, պու կիւն պու սաաթա գատար պիլաֆիթուր՝ աթէլ վէ էօլիւմ սաշմըլ օլաղը ալթը Էրմէնիսթան վիլայէթլէրնտէ քէյֆի մա. յէշա իճրաի հաշարաթ իթմէք իշխն հէր կէօնա սէրպէստիյէթէ հայիլ պուլընլօր:

Իսլահաթ սէր զօմիսէրի մէր. գում Շաքիր բաշա ալմանէսի պուլընան քիւրա աշիլէթլէրնէ միւլէր խարապ իթմէք իշխն եէ. նի եէնի իթթիյաղլար վէ սէր. պէսթիլէր վէրիլմէսիսի մինա. սիպ կէօրէրէք, Բիւրուլէրէ գար. շը աշըմըլ վէ աշըլմագ տափա. լարը սէմէրէսիլ պըրագմագ վէ անլէրի գանուն ու նիլգամաթըն հիւքմի ալթընան գուրթարմագ եանի պուլտան սօնրա, էվլէլէրն. տէն տահա սէրպէսթ հէր նէվ ճի. նայէթի իշլէյէպիլմէք իշխն՝ մահքէմէյէ չաղըրըմագ գօրգու. սընտան տալի գուրթարմագ եօ. լընը տիւլիւնմիլ տըր. Եէօյլէքի կէչէն հաֆիթա Սթանպուլ ճէրիտէ. լէրիտէ օգունտըղը իւղը՝ Տէր. սիմ, Գեալտէ, Աղճատաղ, Ճէ. զիլէ, Միտիատ վէ ճիվար գա. զալարտա իսքեան իտէն քիւրտ էհալիյէ մահքէմէ ճէլպնամլէրի գապուլ իթտիրմէք նիլգամը իճրա օլըմմագ, վէ գըյապի իլմալար սէմէրէսիլ գալմագ վէ Բիւրուլէրի

միւսթէսնա թուածագ իշխն Ատ. լիյն նեղարեթինէ պիր թագրմ թէքիթիւր օլընմը ըտը: Պու. իսթիմանն սեպէպի տախի օ աշիրէթլէրին մէտէնիյէթի գըսա (վահշի) պուլընմասը օլմաղէ, տա. հա զիյատէ քէսպը մէտէնիյէթ իտէնէ տէկին միւշքիլաթա թէ. սատիւֆ օլընմամագ իշխն իմիշ:

Վահշի վէ մէտէնիյէթսիղ օլան աշիրէթլէրի թէքպիյէ իթմէք ի. շիւն էլէ պընմասը լաղըմ կէլէն թէտպիր եըլաղըն վէ Շաքիր բաշանն անլաղընն կէօրէ, անլէրին էլինէ նէվիճատ սիւահ. լար վէրուպ, «կիտին իսթէտիկի. նիղ կիպի հաբըն, գանունէն սիղէ տօգանըլմայաճագ տըր» տէմէք իմիշ:

Աղկըն պիր հայվանը զէնճիր. լէ պողլամագ լաղըմ իքէն, անըն պօնունտա պուլընան իբի տախի չէզուպ պիւթիւն պիւթիւնէ սէր. պէսթ պըրտգմագ վէ իշլէտիկի հաշարաթա կէօղ գարամագ, նէ. վիճատ պիր թէքպիյէ ուսուլի օ. լաճաղընտան, Շաքիր բաշա պու. պուլուլըյէ ֆէվգէլատէ պիր մէ. հարէթ (.) կէօսթէրմիշ տէմէք տիր. բաշաի միւշաիլէյհին իպ. ըրագ իթտիկի պու. մէհարէթ ու լիյազաթտան տօլայը եէնի եէնի նիշանլարլէ իհասանը շտհանէյէ նա. իլ օլմասը պէքլէնիլիր:

Սօն սէնէլէրտէ Արնափուտըգ. տա վէ ճիվարտա իճրաի չէգա. վէթ իթմիշ օլան իսլամ արնա. փուտ պէլէրինտէն Րիզա պէյ, հասան էֆ., Մուսթիլա էֆ. Շէ. ընֆ պէյ, Քէմալ պէյ, Պայրամ աղա վէ սաիրէ կէլէն հաֆթա Սթանպուլա չաղըլըմը օլուպ, եէքտիկէրի իլէ օլան խուսուսթէ. լէրի թէսքին իթտիրմէք պէհանէ. սի իլէ, պաղը թալիմաթլար վէ. ըրմիշ վէ Սուլթան անլէրի հու. զուրընա գապուլ իտէրէք, նիշան. լար վէրմիշ վէ «իսլամ օլտըղը. նըլտան պիրպիրինիղէ գարտաշ. սընըլ» Եօլլու նասահաթ իթմիշ. տիր: Մէղքիւր պէլէր նիշանլա. ըր վէ թալիմաթլարը ալուպ մէմ. լէքէթլէրինէ ալտէթ իթմիշլէր. պու միւքեաֆթտան թէշվիղ օլա. ըրագ եէնի հաշարաթա թէշէպպիւս իտէճէքլէրի պէքլէնիլիր:

ՄՈՒՀԱՐԵՊԷ

Պու կիւնլէր Բօնթօ-Ռիքօ ա. տասը էօնիւնտէ ճէսիմ պիր գափ. կա փուգու պուլաճաղը պէքլէն. մէքտէ տիր, զիրա Սմիրալ Սամբ սուն՝ Եէշիլ Պուրունտան հարէթթ իթմիշ օլան սպանիօլ տօնանմա. սընըն քէօմիւր ալմագ իշին Բօն. թօ-Ռիքօնըն Սան Ժուան պուրնը. նա կիտէճէկինի գափիէն զանն իթմէքտէ օլտուղընտան, Գուպա. նըն մուհասէրէսիւնի պիր թագրմ ուֆագ վաբօղարա հէվալէ իտէ. ընք, Սպանիա տօնանմասընը գարըլմագ իշին Ամերիգանըն

էն պէօյիւք հարպ սէֆինէլէրի ի. լէ Անթիլ տալարընա միւթէվէճ. ճիհէն հարէքեաթ իթմիշ վէ Բօն. թօ-Ռիքօ Կաղընընտա կէպիւմ. ք. տի տիր: Հաթթա պիր Կաշ վա. բօղար տարլարըն մուսթիւնէթի իլէ իքի նօգթտան գարալա տաքէր չըգարաճաղարըն էսնատէ Սպանիա թագալարընտան օլան մուգալէմէթ սէպէպի իլէ կէրի չէքիլմէյէ մէճպուր օլմուշարտըր. քէզա Ամերիգալըլարըն, Գուպատա գարալա չըգմագ իշին իթտիքլէ. ըր թէճրիւպէ սէմէրէսիղ գալմը տըր վէ 5 առէտ վաբօղար գա. ըրարտիտէ օլարագ կէրի չէքիլմիշ. լէր տիր:

Սպանիա շիմտիքի կիպի հիւ. ճուստէն սարֆը նաղար իլէ եա. լընըլ մուտաֆա Կօլունա տէվամ իտէրսէ, մուհարէպէնի ուզուն միւտտէթ սիւրէպիլէճէկի միւհթէ. մէլ կէօրիւմէքտէ տիր. չիւնքի Ամերիգալըլար տախի հասթաղգ. տան գօրգտուղարըն սէպէպ իլէ, սօն պէհարտան էվլէլ Գուպալա տաքէր կէօնտէրէմէյէճէքլէր տէ. յու զանն օլունըյօր:

ՏԱԽԼԻՅԷ


Բրէնսէս Գլէմանթին հաղրէթ. լէրի հափա թէպալիլ իշխն բը. ընէսէս Մարի Լուիզ հաղրէթլէ. ըր իլէ պէրապէր վիէննատան Ա. պաղիայա աղիմէթ իթմիշլէրտիր: Բրէնս հաղրէթլէրին տախի պիր գաշ կիւն սօնրա մահալը մէղ. քիւրէ աղիմէթլէ օրատա Գարատաղ բրէնսի Նիգօլա հաղրէթլէրլէ կէօ. ըրաշտիւքլէրին վիէննատան քէ. չիտէ օլան պիր թէլէկրաֆ պիւ. տիրիյօր: Պու միւլազաթտա Զէ. թիւնտէ մուգմիմ ռուս էլիսի տա. խի հաղըր պուլունմը տըր:

—Պուկար միլլի պանգասընըն՝ նէշը օլունան պիւնիւ օլէ քեար զիյան հիսապընտան անլաղըլտըր իւզըր՝ 1897 սէնէսինտէ 1.255,707 ֆռ. 40 սնթ. պաֆի քեարը օլ. մուշ տըր:

—Րիվալէթէ նաղարէն՝ 1885 փուգուաթընտան տօլայը Րուսի. ալա հիճրէթ իթմիշ օլան պուլ. կար տաքէր գապիթլէրի՝ եինէ պուլկար օրտուընա իտիալ օլ. մալարընը թահրիլէն թալէպ իթ. միշ վէ իշպու թէքիթլէրի հար. պիյէ նէղարէթի թարաֆընտան գապուլիյէթ պուլմը տըր:

—Պուկարիտան զախիլէ իւ. ըաճաթընըն մէնն օլընմասը մէսէ. լէսի Սօֆիատա նաղարը տըգա. թա ալընմըլ օլուպ, շիմտիքի հալ՝ հէր պիր գաղատա նէ մըգտար զախիլէ մէվճուտ օլտուղընը ան. լամագ իւզրէ, ուրապիթէլէրէ՝ պունա տալիլ մալիւմաթ վէքմէ. լէրի իշխն Սօֆիատան թալիմաթ կէօնտէրիլմիշ տիր:

—Մուհաճիր միլլէթտալարըմըգ. տան 80 տէն 120 քիշի հէր հաֆ. թա Սթանպուլա ալտէթ իթմէք. տէ տիրլէր: Կէլէն ճուսաա էր. թէսի իսէ կէրէք տօղրուտան տօղ. ըու վառնատան վէ կէլէք Ռուս. ճուր թրէնի իլէ կէլէքը ռուս վէ պուլկար վաբօղարա ալտէթ. իտէլէր 185է պալիղ օլմուշ վէ ի. շիթտիկիլմիղէ նաղարէն՝ պունլար. տան 1100 քիշինիլ Կօլմասարաֆը 8. Կարապիտ ֆոփասաֆիան թարա. ֆընտան թէտիլէ օլունմը տըր:



ՄԱՀԱԳՈՅԺ

Վառնաի Հայ գաղուլը կսկծա. լի կորուստ մը ունեցալ յան. ձին 8. Կարապետ կէմիճեանի, որ ծաղիկ տարիքի մէջ յանկար. ծամահ եղաւ անցած կիրակի, 3 Մայիս:

27 ամեայ երիտասարդը, ո. ըուն մահը կողբանք գառնագին, ընդհանուր համակրութիւն շա. հաժ էր իր բարեմասնութիւն. ներով, մասնաւորապէս իր պար. կեշտութեամբ, անկեղծութեամբ եւ ազգասիրական եռանդով:

Ասոր յայտնի ապացոյն եղաւ յուզարկաւորութեան տիրուր հան գէսը որուն մասնակցեցան Վառ. նայի բոլոր ազգայինները, եւ ուր կը նշմարուէին նաեւ օտարազ. գիւնը:

Տ. Յարութիւն Զաքոնեան եւ Տ. Յարութիւն Մէնգիլճեան եկեղեցւոյ լակին մէջ յուզեալ շեշտերով գամբանականներ խօ. սեցան որով թարգման եղան հանրութեան զգացած վիշտին:

Ի նշան երախտագիտութեան այն շիւր հոգածութեան համար, զոր բարեյիշատակ հանգուցեալը միշտ ցոյց տուած էր ազգ. վար. ժարաններուն, 12 աշակերտներ կընթանային գաղաղին քովէն, զոր նոյն պէս կը շրջապատէին 6 սգակիր երիտասարդներ, հան. գուցեալին մտերիմ բարեկամներ:

Վաղամեա երիտասարդին ազ. գակիցներէն եւ բարեկամներէն զրկուած շուրջ տասը պատկեր եւ նուագախմբի մը սգալի եղա. նակները կաւեցնէին յուզարկա. լորութեան տիրուր հանգիստաւ. ըրութիւնը:

Ողբացեալին կեանքին եւ նկա. ըրգրին մէկ քանի գիծերը վեր հանել ուրիշ անգամի վէ. ըապահեղով, կէմիճեան ընտա. նիքին կը յայտնէք այն խորին վշտակցութիւնը, զոր կըզգանք հանրօգուտ ամէն ձեռնարկի բարոյապէս եւ նիւթապէս օգ. նելու միշտ պատրաստ Ազնիւ կարապետին գաղաղին առջեւ:

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 6 Մայիս	
Պուղտայ	
Վակօն, լիպրա	47-51, հէքթօլ. 11-11.50 ֆրանք
Արապա, լիպրա	47-55 հէքթօլ. 10-12.50 ֆրանք
Արքա	
Լիպրա 38-41, հէքթօլ.	5.80-6.20 ֆրանք
Մըսըր	
Վակօն, լիպրա	57-58 հէքթօլ. 7.50-7.80 ֆրանք
Արապա, լիպրա	57-60 հէքթօլ. 7.80-8 ֆրանք
Ֆաւորալա	
100 օգգտար 16-20 ֆրանք՝ մալա	կէօրէ
Արապա մուամլէսի՝ Նաբօլէոն	21 ֆռ. հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 15-20 վակօն վէ 15-20	արապա պուլտայ, 10-15 արապա արքա վէ 4-5 արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՄԻԻԹԵՆԷՎ ՎԻԷ

Սթանպուլտա պիր մասրահաթ. կիւզար (աժոնս տիրութիւնի) թա. յին իթմէք մսգտէտի իլէ Զալի. ցերիտ հիւքիւմէթի Պապը Ալի իլէ մուսապէրէյէ կիրիշմիշ տիր:

—Էվրօպըլը ամիրալարըն թահ. թը նէղարէթիւնտէ օլարագ Կի. ըրտտէ օթօնօմի ուսուլի իւզրէ պիր իտարէ թէէսիս ու թանգիմ իթմէք հազգընտա Րուսիա, Ֆը. ըանսա վէ ինկիլթէրա հիւքիւ. մէթլէրի պէյնիւնտէ մուսապէրէ իճրա օլունտըլընը թահ պիւտի. ըրիյօր:

—Վօլտան չէքիլէն պիր թէլէ. կրաֆ թէսալիատան իբի վաբօր իլէ Սէլանիկէ տաքէր կէօնտէրի. տիկինի պիւտիլմիշ տիր:

—Աւստրիա—Հունգարիա խա. ըրիլէ նաղըրը գօնթ Կօլուսօվրս. կի իբի միլքին մէպուսան մէճիւս. լէրինտէ շարգ մէսէլէսի հոգընտա ալթիտէքի սուրէթտէ պէյանը էֆքեար իթմիշ տիր:

Շիւտիքի հալ Շարգտա մուճի. պը էնաիլէ օլաճագ պիր հալ եօգ տըր. հալպու քի, օրատա աաիմա մուհիմ փուգուաթլար գուհուր ի. տէպիլիւր պու սէպէպլէ Աւստրիա —Հունգարիա հէր պիր փուգուաթ իշխն իհթիյաթէն հաղըր պու. լընմալը տըր: Րուսիա տախի Աւստրիա կիպի Շարգտա հալը հաղըրըն պէգասընա տըղուքէշ տիր: Կիրիտ մէսէլէսիտէն տօ. լայը Աւստրիա վէ Րուսիա պէյ. նիւնտէ պիր իթթիֆագաղըլը գու. հուր իթթիկինէ տալիլ չըգմըլ օ. լան շայէա պիէսաս տըր: Եալը. նըլ բրէնս Եօրկիօսըն նամգէտի. կինէ հէմէֆքեար պուլունմաղըլը իշխն՝ Աւստրիա պու մէսէլէսի հալլինի Րուսիա վէ թուրքիայա պրագմըլ վէ էկէր պու իբի տէվ. լէթ պէյնիւնտէ պիր իթթիֆագ հասըլ օլուրսա, Աւստրիա անլէ. ըրին վէրէճէկի գարարը մէմունէն գապուլ իտէճէք տիր:

Նիհայէթ գօնթ Կօլուսօվրի՝ Պապը Ալի բրէնս Եօրկիօսըն նամգէտիկինի գապուլ իթմէյէ շիմտի մէլլ կէօսթէրտիկինտէն՝ պու մէսէլէսին եաղըն վաղըլտա Րուսիանըն արղուսընա միւթապըղ սուրէթտէ խիթամ պուլաճաղը միւհթէմէլ տիր:

—Սթանպուլտան չէքիլէն պիր թէլէկրաֆա կէօրէ՝ իլէրուտէ պիր գարըլըլըլը փուգու պուլմամասը իշխն, 30000 էրմէնի մուհաճիր. լէրին թուրքիա մուլթէլիֆ մա. հէլլէրինէ տաղրտըլմասը Բէթէրս. պուրկտա ճէվատ պէյէ թալի. յէ օլունմըլ իտէտէ, հանկը մահէ. լին մուհաճիրլէրի իշին պու թէտ. պիրին իճրա օլընաճաղը թէլէկ. ըաֆտա իյզահ օլունմամըլ տըր:

—Շարգ Տէմիր Եօլ գուլբան. եասընը 1897 սէնէսինտէ 2843663 ֆռանք սաֆի քեարը օլմուշ տըր: